Հաստատում եմ

Տնօրեն՝ /Ս. Սարգսյան/

29. 08. 2022թ.

ԴԱՍՂԵԿԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

Կոտայքի մարզի «Ակունքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Դասարան 1-ին

Դասղեկ՝ Ա. Պարսամյան

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) I դասարանում սովորում է 25 աշակերտ՝ 11 տղա և 19 աղջիկ: Դասարանում ստեղծվածէ կուռ, համերաշխ կոլեկտիվ:_Աշակերտների մեծ մասը հաճախել է մանկապարտեզ: Որոշ աշակերտներ աչքի են ընկնում իրենց
ընդունակություններով, աշխատասեր են, ուշադիր: Կոլեկտիվը իր ներսում կարողանում է լուծել ընկերների առջև ծառացած պարզագույն խնդիրները և այլն:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ
Աշակերտներին ապահովել դասագրքերով: Ուսումնադաստիարակչական աշխատանքները կատարել սերտ, համագործակցված, որպեսզի ունենանք դաստիարակված, կրթված սերունդ:_Դասարանի աշակերտների բարձր մակարդակի վրա պահելու համար պահպանել կապը ծնողների հետ, նրանց մշտապես տեղյակ պահել աշակերտների առաջադիմության ու կարգապահության մասին: Բացատրել դպրոցի դերի ու կրթության, դաստիարակության անհրաժեշտության մասին: Ապահովել ծնող-ուսուցիչ կապը: Աշխատանքները կազմակերպել այնպես, որ ծնողները լինեն աջակից դասվարին թե՛ կազմակերպչական,թե՛ ուսումնական-կրթական հարցերում: Որոնել, գտնել, կիրառել դասավանդման համար անհրաժեշտհետաքրքիր, արդյունավետ մեթոդներ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր դաստիարակություն _Աշակերտների դաստիարակել ազգային ոգով: Հայեցի դաստիարակությունը ապահովելու նպատակով մի շարք
հայ գործիչների մասին տալ այնպիսի պատկերացումներ, որոնք աշակերտներին կմղեն նմանվել հայ ազգի նվիրյալներին: Բացատրել կրոնականտոների իմաստը:

Գեղագիտական դաստիարակություն _Աշակերտների մոտ ձևավորել գեղեցիկի՝ որպես ներդաշնակության մասին պատկերացումը: Ուղղորդելդեպի այն, որ գեղեցիկը ունի ոչ միայն արտաքին, այլև ներքին կողմ և ներդաշնակությունը ձևավորվում է այն ժամանակ, երբ գեղեցիկի
արտահայտման ներքին և արտաքին կողմերը գտնվում են միասնության մեջ:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն___Դաստիարակել քաջություն և արիություն ոչ միայն մարմնում, այլև հոգում: Ձևավորել
պայքարի ոգին՝ հայրենիքի միասնականության, անվտանգության ու խաղաղության համար՝ դրա հենքում դնելով համերաշխության սկզբունքը:

Ֆիզիկական դաստիարակություն __Աշակերտներին մասնակից դարձնել սպորտային միջոցառումներին, մրցումներին: Խրախուսել մարզաձևերում աչքի ընկնող աշակերտներին: Խոսել անձնական հիգիենայի մասին:

Աշխատանքային դաստիարակություն __Հետևել դասարանի մաքրությանը, խնամել ծաղիկները: Հարգել ուրիշի աշխատանքը: Ձևավորելաշխատանքային հմտություններ: Աշակերտներին մասնակից դարձնել մանկական ցուցահանդեսներին:

Բնապահպանական դաստիարակություն __Դաստիարակել ուշադիր վերաբերմունք շրջապատող բնության , դպրոցի, սեփական քաղաքի նկատմամբ: Վաղ մանկությունից երեխան նույնպես պարտավոր է պատասխանատվություն կրել շրջակա միջավայրի պահպանման համար:

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ_____Ապահովել ծնող-դպրոց կապը: Ծնողական ակտիվ կոլեկտիվին ներգրավել դպրոցական միջոցառումներին: Զրույցներանցկացնել երեխայի օրվա ռեժիմի կազմակերպման մասին

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

N	Դասի թեման	Կատարման ժամկետը
1	Գիտելիքը ուժ է: Ծանոթացում	I
2	ՀՀ խորհրդանիշները	II
3	ՀՀ անկախության օրը	III
4	Իմ հարազատ դպրոց	IV
5	Ոսկեդեղին տերևի պատմությունը	V
6	Իմ ուսուցիչ թանկագին	VI
7	Ինչպես եմ պատրաստում դասերս	VII
8	Հանդուրժողականության ուսուցում: Բանակցություններ:	VIII
9	Պահպանել բնությունը	IX
10	Հանդուրժողականության ուսուցում: Համագործակցություն:	X
11	Ուրախ ձմեռ	XI
12	Ա/Ի Ինչպես պաշտպանվել երկրաշարժից	XII
13	Հ/ու Երեխայի իրավունքները	XIII
14	Եղևնին որպես տոնածառ	XIV
15	Սրբազան հաց	XV
16	Հայկական եկեղացական տոն Տեառն ընդառաջ	XVI
17	Գովք մայրենիին	XVII
18	Թումանյանի հեքիաթները	XVIII
19	Ա/Ի Ճանապարհային երթևեկության կանոնները	XIX
20	Դռները բացե՛ք գարուն է գալիս	XX
21	Հանդուրժողականության ուսուցում Արդյունավետ հաղորդակցում	XXI
22	Մայր իմ անուշ ու անգին	XXII
23	Հանդուրժողականության ուսուցում	XXIII

	Միջմշակութային փոխըմբռնում	
24	Սուրբ Զատիկը որպես Հարության տոն	XXIV
25	Ընկերասիրություն	XXV
26	Հանդուրժողականություն	XXVI
27	Զրույց նվիրված եղեռնին	XXVII
28	Հանդուրժողականության ուսուցում Շրջակա միջավայր	XXVIII
29	Մայիսի 28 Հայաստանի առաջին Հանրապետություն	XXIX
30	Ինչպես կազմակերպել ամառային արձակուրդները	XXX